

քան և թիւքաց հաւատարմատարները բացակայութիւնը գեղատեսիլները խորհուրդներին:

Որովհետեւ Ֆրանսիական դեպարտմէնտը հետաքննարկելու և Պոլսից ստանց սուլթանի հետ տեսակցելու, այդ պատճառով եղբայրացիներն են, որ դեպարտմէնտը անբաւական է Բ. Գաւիցի: Տեսնուած յոյսը Բ. Գրանը, որ նա գնում է և պատրաստ է տեսնել սուլթանի հետ, մանուկն էր որ նա մի քանի հազարդրութիւններ պէտք է տնէ: Մի և նոյն ժամանակ նա նշանակեց իր գնալու օրը: Նրան պատասխանեցին, որ սուլթանը տկար է: Գեպարտմէնտը չը յետաձգեց իր գնալու օրը և, ինչպէս հաստատուեալ է, չը յանձնեց սուլթանին Գրանի նամակը, որով նա շնորհակալութիւն էր յայտնում ստացած թիւքաց շքանշանի համար: Տունիսի անցքերից յետոյ թիւքերայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները այնքան նշանաւոր են դարձել, որ ամբողջ Եւրոպան նրանց վրա ուշադրութիւն է դարձրել:

Ռուսաց քաղաքականութիւնը, որ քննած էր երեւում, սկսել է նորից ցոյցեր անել: Ռուսաց դեսպանը բարձրացրեց չինոգործական սահմանների հարցը և միւս դեսպանները նրա հետ միացան: Արեւմտեան հայոց պատրիարքը յայտնել է իր բազմաթիւ բարեկամներին, որ, ինչպէս նա տեղեկութիւն է ստացել հաստատ աղբիւրներից, Ռուսաստանը ձեռնամուխ կը լինի հայկական հարցին և կը համոզէ միւս պետութիւններին այդ հարցը անմիջապէս լուծել:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԳԻԱՅԻՑ

Վան, 3 յունիս 1881

Ներկայ տարւոյ փետրուար 15 թիւ կրող Վեդուլի մէջ կարգացի մի յօդուած, որով Վեդուլի պ. խմբագիրը գէթ խօսել կարծեր է մեր յօդուածին, որ տպուած էր «Մշակի» 23-րդ թիւում: Յաւալի է ըսել թէ «Վեդուլի» պ. խմբագիրը ուրիշներու սխալները բռնելու ելած միջոցին իր սխալները կը բռնուին: Ըստ «Վեդուլի»

նային և Հայաստանի մէջ առաջին կարգի ամուր, սորա մի քանի կիրճերը, որոնք միմիայն ճանապարհներն են այս գաւառի խորքերը թափանցելու, բնական մարտկոցներով պաշտպանված են, այնպէս որ 10 մարդ կարող է 100 կանոնաւոր զինուորներին հեշտութեամբ յետ մղել: Ունի հովիտներ և տափարակներ: Լեռները ծածկված են անտառով և ցողատու ծառերով: Նրա լեռներում արածուեն ոչխարաց հօտեր և այծերը ընտիր տեսակ չուս անուն, որի մաղը (կեա՛մ) վաճառահանում է Եւրոպայում:

Բնակչաց ամենամեծ մասը նեոստորական աղանդին պատկանող ասորիներ են, ամենքն էլ չին զենքերով զինված և կէս անկախ են: Մարշմերը ստորինների հողերը և մարմնաւոր գուլիս, որ միանգամայն նրանց զինուորական սպարապետն է, Գուշանի գիւղում նստում է և կառավարում է աղբը մեղքների խորհրդակցութեամբ:

Ասորիները հարստութիւն չունեն, պարսպում են խաչնարածութեամբ և երկրագործութեամբ: Կարծում են սակաւագետ ուսում, քաղաքակրթութիւն անձանթ է նրանց, միայն ոգևորված են կատարել անկախութեան դաւաճարով: Նրանք գեղատեսիլ, միմիայն ընկալելի կոճեղ վաճառականներ ել ու մուտ են գործում երկրի մէջ:

Ասորիների հայոց հետ ունեցած համակրութիւնը սկսվում է 1854-ին: Այդ թուականին ամենայն հայոց հանգուցեալ կաթող. Ներսէս Ե-երորդը իր երկու կրօնական կոնգրեսներով հրահանգում է վանայ հայոց առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոսին համակրական սէր ստեղծել հայերի և ասորիների մէջ: Այդ հրահանգով վանայ առաջնորդը 1856-ին Մարշմերին հրաւիրեց վան, ուր մեծ հանդիսով ընդունեցին նրան և առաջին տեղը տուին հայոց Գանկուսներ եկեղեցու մէջ: Բայց յիշեալ արժանաւոր հայրապետի մահին զինի, այդ ստեղծված

որպէս թէ վանում 8,000 տուն բնակիչ կայ երբ, որից 5,000 զուտ հայ է, թերեւ ճիշդ է որ 8,000 տուն բնակիչ կայ վանում, բայց Աւանց, Շահպաղի, Շամիրամ, Սիսկայ, Ձրուանդանց, Գուրուպաշ, Լէսկ, Շուշանց և այլն գիւղերն են միասին հաշուելով է որ վանում կուրենամք 8,000 տուն բնակիչ: Վերոյիշեալ գիւղերն քաղաքէն $1\frac{1}{2}$ — $1\frac{1}{2}$ ժամ հեռավորութիւն ունենալուն արեւարձան կը համարուին վան քաղաքին, և կառավարութիւն միշտ յիշեալ գիւղերն այնպէս կըմընէ: Մինչդեռ մեր ցոյց տուած 2,886 տուն միմիայն վանի հայ բնակչաց տանց զուամբն է, ի բաց առեալ թիւքաց աներն և յիշեալ գիւղերն: Այսպէս ահա «Մեդուլի» պ. խմբագիրը քննելով մէջ երազելով որ վանի մէջ 2,886 տուն բնակիչ չը կայ, այլ 8,000 տուն, հետեւեալ առաւօտ արթննալուն պէս եւր մեր յօդուածին դէմ է գրեր, և զայն «Մշակի» խմբագրատան մէջ յարմարեցում մի բան կը համարի: Այդպիսի բաներ անել «Մեդուլի» մասնագիտութիւնն է և «Մշակի» պարոն խմբագիրն այս մասնագիտութիւն չունի: Իսկ գալով այն կէտին, զոր «Մեդուլի» կը գրէ թէ վանեցու ակնարկած յօդուած «Մեդուլի» 67-րդ թիւում է, այդ բանը չարգարացնելը զենք թրքամով լինելուց, որից փաստերը գտնելու ետեւ եղիք, 67-րդ թիւում եղած է թէ 76-րդ թիւում, ինչոք մի և նոյն է, յանցանք ձերն է, որ իմ ձեռքս հասած 76-րդ թիւ կրող «Մեդուլի» այնչափ անգոյն էր, որ դուռը կը գիտնալ թէ 67 է լրագրին թիւ թէ 76:

Իսկ իմ անձին ձեր ժալթքած երկրմտեայ և անպատիւ խօսքերուն ոչինչ ասելիք չունեմ, պ. Սիմեոնեանց, զի կօչիկէն վեր ելլող, խոշորացողով թիֆլիսէն վան գիտող «Մեդուլի» պ. խմբագիր անկրթութիւն կը յայտնեն այդ խօսքերը, և ես կը ներեմ յիշեցնելով նմա թէ ձեռքըս, այլ ոչ հրտման տալով:

«Մեդուլի» կը գրէ թէ պ. Վանեցին իւր բնարան «ականջին» հանել աչք գնելու տուածն առնելով, իւր նամակի նիւթ չինում է «Մեդուլի», ծամծամում է, քաջքաշում է նորա մի առաջնորդ յօդուածի մի կտորն ամբողջութիւն առանց հանդէս բերելու: Զատ լաւ, եթէ «Մեդուլի» կամ մենում է անկից վերջ իւր ամբողջ յօդուածը կառնենք կը քաջքենք:

«Մեդուլի» մի ճշմարտութիւն յերան հանած կը լինէր, եթէ ասէր վանի նահանգի բնակիչները պակաս ցոյց տրուած են: զի գտնուած են թէ քաղաքի և թէ գիւղերի մէջ այնպիսիներ

համակրութիւնը առանց անկու միտաւ, որովհետեւ Ներսէս Ե-ը իր մտքերին յայտնող չունեցած: 1880-ին, քան և չորս տարուց զինի նախկին համակրութիւնը կրկին յիշվեց: Մարշմերը կրկին վան եկաւ և 20 օր հիւրասիրվեց Գանկուսներ եկեղեցում: 1880 հոկտեմբեր անգղիացի միտքնար վանը Ձուլամերկ գետը իրեն լուստարութեան առաքելալ իր հետ տանելով բազմաթիւ ասորիներն տպեալ գրքեր, տպագրութեան մամուլ ասորիներն տառերով և մեծածախս պատրաստութեամբ:

Բայց չը նայած միմիայնների այսքան զոհաբերութեան և աշխատութեան, ասորիները համակրում են միայն իրենց դարձրող դրացուն—հային: Եթէ մեր կողմից մի փոքրիկ ցոյց լինէր, նրանք ի սրտէ կը ցանկային դրան: Օրինակ եթէ մենք նրանց մէջ ուսումնարաններ բանալու ցանկութիւն ունենայինք, նրանք ինքեանք կօգնէին իրենց գործին: Մի խօսքով նրանց բոլոր ակնկալայ գործին մեղանից է, ինչ որ պակասութիւն են լուծում, դրա համար մեղ են դիմում, նրանք օտարներին չեն համակրում:

Գիւղերից թիւ	151
Ասորից թիւ	76,879
Հայերի թիւ	9884
Քրդերի թիւ	4338

8.

Ն օ ր օ ւ ւ ց և Շ ա ր ա խ
Նօրուղ և Շատախ միացեալ գաւառները հեռի են վանէն 14—16 ժամ, դիրքը լեռնային է, անտառոտ, քրաւէտ, ունի հովիտներ: Տիրուր կամ Շատ գետի ակունքը Նօրուղէն կը սկսին և Շատախու միջին կանցնին: Գաւառագրութիւն է Շատախու-թաղ: Ունի ընտիր այծեր, մանուսնդ չուս կամ ֆէլիկ անուանած տեսակը, որոնց մազերից գործում են գոյնգոյն շալեր (նոյն այծերից ունի Ձուլամերկ): Նօրուղի մէջն է հուշակաւոր Հոգոյ վանքը, ուր աւանդութեամբ կարծում են, պահված է Գրիստոսի դաստարակը: Վանքի պա-

որք պահած են իրենց որդիքներ և օտար երկրում ունեցած պանդուխտներ, կարծելով թէ վտանգ մը կայ այս վիճակագրութիւնի ծայրը: Իսկ աների թիւը որ պահել է կարելի, այնչափ ճիշդ է, որչափ ճիշդ է «Մեդուլի» սխալած լինելը:

Վանեցի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նօրուղի մի կատարվեցաւ Սուլթանի քոյրերից մէկի հարսանիքը: Ձարմանալին այն է, որ բարձր հասարակութեան պատկանող թիւքաց կանայք երբեք հարեմները չեն այցելում, ստորութիւն համարելով այդ վարմունքը: Այդ պատճառով նրանցից ոչ մէկը ներկայ չէր հարսանիքին: Հարսանիքին ներկայ գտնվող մէկ անգլիուհու նկարագրութեամբ, նորահարս բնակարանը շատ պարզ և միջին անգամ աղքատ է, իսկ բազմաթիւ ծառաները շատ աղքատ և վատ են հագնված: Նօրափեսան, Մեհմէդ-բէյ, 24 տարեկան արեւելեան ճաշակով գեղեցիկ մի երիտասարդ է, որին ինքն իշխանուհին ընտրեց իր համար: Ստանալով Օմանների տանը պատկանող իշխանուհին կը իրանց ամուսններին ընտրելու արտօնութիւնն ունեն, և եթէ նրանց ընտրութիւնը մէկ ամուսնացած մարդու վրա ընկնի, այն ժամանակ այդ մարդը պարտաւոր է իր կնոջից բաժանվել և պատվել իշխանուհու հետ: Մեհմէդ բէյ մէկ անսովոր բաղդի հանդիպեց, աղքատ և անյայտ սովորաւոր յանկարծ իր տիրոջ փեսան դարձաւ: Անցնելով իր կնոջ նշնարանը տանող բազմաթիւ սենեակներով, ուր պէտք է պտակի հանդէսը կատարվէր, նա մանր արծաթեայ փողեր էր գցում երկու կողմից իրան չըջապատող ծառաներին: Հանդիսին ներկայ էր միայն նորահարսի մայրը, լոյսը ծխակաւարութիւնը բազկացած է նրանում, որ իմամը նորապատկերին թոկով կապում է և յայտարարում է նրանց ամուսնի այր և կին: Գետնի նորապատկ երկտասարդը յետին դռներից դուրս գնաց և անյայտացաւ: Ենթադրվելու էին թիւքական սովորութեանը՝ ծառաների մտրակահարութեանը, որի համար ծառաները առատութեամբ ընծայ են ստանում: Անգլիուհուն այն ժամանակ թոյլ տուեցին նորահարսին շնորհասրելու: Իշխանուհին 22 տարեկան է, նա շատ գեղեցիկ և համակրական է: Նրա ամուսնի տեղից կանգնած էր մէկ պառաւ հատ կին, որը անդադար ուղղում էր նորահարս:

Բայց չը նայած միմիայնների այսքան զոհաբերութեան և աշխատութեան, ասորիները համակրում են միայն իրենց դարձրող դրացուն—հային: Եթէ մեր կողմից մի փոքրիկ ցոյց լինէր, նրանք ի սրտէ կը ցանկային դրան: Օրինակ եթէ մենք նրանց մէջ ուսումնարաններ բանալու ցանկութիւն ունենայինք, նրանք ինքեանք կօգնէին իրենց գործին: Մի խօսքով նրանց բոլոր ակնկալայ գործին մեղանից է, ինչ որ պակասութիւն են լուծում, դրա համար մեղ են դիմում, նրանք օտարներին չեն համակրում:

Նօրուղի մէջն է Կոզան գիւղը, որ անցեալ աշնան անձնապաշտպանութեան առաջին փորձն արին հայերը, աւազակներից 8 ր ուսանելով և 30 հոգի վիրաւորելով, որոնք գիւղի ոչխարները յափշտակել էին: Այս պարզ օրինակը կարող է ցոյց տալ, որ հայոց զինուորական հոգին մեռած, հանգած չէ, ալ մոխրի տակ թաղված կրակի է նըմանում, որին արծաթեղ է պէտք: Անցեալ ձմեռ վանայ մէջ եւ սեռայ կողանցից, որոնք գարնանային արշաւանաց դէմ պատրաստութիւն կատարվում էին տեսնել, նրանք նոր զենքեր էին որոնում, բայց այդպիսի զենքեր վանում գտնելը հեշտ բան չէ:

Գիւղերի թիւ	115
Հայոց թիւ	26,245
Եկեղեցիք	46
Վարձարանք	7
Աշակերտք	487
Ասորիք	447
Քրդեր	5,190

9.

Մ օ Կ ւ, Մ օ մ ր օ տ ան ք և Ս օ պ ր Կ և ր օ
Այս երեք գաւառների գլխաւոր տեղին է Մուս վանէն 16 ժամ հեռավորութեամբ (Սուրբ Կարկերտ կը վերաբերի Սգէրտին, Բաղիշայ կառավարութեան տակ): Գիրքը առաջին կարգի ամուր, բարձրարեւծ սարերով, որոնք ծածկված են անտառով: Բնակիչք ժիր և քաջառողջ են, հրա-

սի քղանցքը (շէնք): Յայտնվեցաւ, որ պառաւ իշխանուհու մայրն էր, բայց, որպէս աղախին ծնված, նա իր աղջկայ ներկայութեամբ իրաւունք չունէր նստել: Բայց նա այդ բանից բոլորովին չէր վիրաւորվում և ուրախութեանց փայլում էր, տեսնելով իշխանուհու ուրախութիւնը:

Յրանկիֆուր Մայնի վրա եղած զինահանդիսին լուր տարածվեցաւ, որ Սակսօնիայի թագաւորը, թագուհին և ալ բազմաթիւ բարձրաստիճան անձինք կայցելեն զինահանդէսը: Իսկոյն բոլորը ֆրանկներ հագնած, շինութիւնը զարդարեցին ծագիկներով և յայտերով, մուսքի մօտ մէկ շէնքար կանգնեցին, որ հասարակութեանը չը թոյլ տայ մտնել շինութեան մէջ: Բոլոր օտար այցելողներին մերժում էին: Ի միջի այլոց մօտեցաւ մէկ տիկին մի տղամարդու հետ: Նրանց ասացին, որ բարձրաստիճան հիւրերին են սպասում և այդ պատճառով հասարակութեան համար մուտքը փակված է: Այցելուները ժպտալով միմեանց նայեցին և հեռացան: Մի քանի րօպէից յետոյ, կառքով եկան աղետախոսներ և հարցին, արդեօք դեռ ևս այնտեղ են նրանց մեծութիւնները: Նրանց պատասխանեցին, որ նրանք դեռ ևս չեն եկել, բայց եկաւ մէկ տիկին մի աղամարդու հետ և նրանց ներս չը թողին: Արդեաւոր սարսափով բացականչեց. «Իշխանուհու, ախր այդ դրանք էին, թագաւորը և թագուհին: Մասնաժողովը կամենում էր ուղղել իր սխալը, բայց արդէն ուշ էր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՐՈՒԴԻ, 30 յունիսի Պետական բանկի 5% տոմսակը առաջին շջանի արժէ 95 ր. 12 Կ., երկրորդ 93 ր. 75 Կ., երրորդ 94 ր. 50 Կ., չորրորդ 94 ր. 50 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր., երկրորդ 220 ր., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 12 Կ., երկրորդ 92 ր. 12 Կ., երրորդ 92 ր. 12 Կ., սակի 7 ր. 83 1/2 Կ.: Ռուսաց մի լուրը Լոնդոնի վրա արժէ 25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 214 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա արժէ 264 ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Հայի են սրա լեռնային աննման տեսարանները, անուանի է մեղր, խաղող, չամիչ, ընկույզ և այլն: Այստեղ գործում են բնափր չափեղները չուս ալծի մաղից և քէպէկայ անուանած կօշիկներ, որ հիւստում են մաղից և կանեփից: Մոկաց լեռները հորոս լեռների շղթան է, որ Գեալմուէն, Ձուլամերկէն, Նօրուղէն, Շատախէն անցնելով կը ձգվի մինչև Բաղէշ: Մոկաց մէջն է Գիւթիւ, այսինքն փոթորիկ, սուրը Գէորգի վանքը իր հրօշակաւոր աքաղաղով Այս վանքը յիշեցնում է ճանապարհորդին Ալպան լեռների Ս. Բերնարդի վանքը, որ նոյնպէս չինված է լեռան ամենափոսանգաւոր անցքի վրա, ուր ամուսնայ տաք եղանակներին անգամ, կարող են ճանապարհորդները բուքից խեղդվել: Սուրը Գէորգայ վանքի մէջ մի աքաղաղ կայ, որ պատու ունի սուրբ կոչվելու, Սէն-Բերնարդիան շների պաշտօնի նըման մի լան է կատարում, այսինքն գուշակում է լաւ կամ վատ եղանակները: Գուշակութիւնը կատարվում է աքաղաղի խօսելով կամ չը խօսելով: Ճանապարհը շարունակելու համար ճանապարհորդները պարտաւոր են աքաղաղի խօսելուն սպասել ճանապարհ ընկնելու համար: Շրջակայ գաւառների հայերը և քիւրդերը հաւատարապէս յարգում և երկրպագում են սուրբին, անպակաս անելով նորա խոսել, մոմ, մատաղն ու գահարկութիւններ:

Այդ վանքը առաջ միշտ անդրով էր տրվում, և մի ժամանակ վանայ վարձարանները դրա արդիւնքով էին կառավարվում: Այժմ սուրբ աքաղաղի վաստակը Աղթամարայ կաթողիկոսն է վայելում: Սպարկերտի մէջն է ս. Խաչի հոյաւայ վանքը, որ այժմ քրդերի համար մարդ է դարձել:

Գիւղերի թիւ	111
Հայոց թիւ	18,575
Քրդեր	6065

(Կը շարունակվի)